Կ՝ 1787

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«20» 03 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 030-26

Նախաձեռնող՝ ***«ԴԵՄԵՐ» ՍՊԸ***
Կոտայքի մարզ, Արամուս, Տիգրանաձորի խճղ.,122 շին.

Գործունեությունը՝ ***Արամուսի բազալտների հանքավայրի «ԴԵՄԵՐ 3» տեղամասի արդյունահանման աշխատանքներ***
Կոտայքի մարզ

Առդիր՝ 8 թերթ

20.03

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 030-26

«20» Դեկտեմբեր **2026թ.**

Արամուսի բազալտների հանքավայրի «ԴԵՄԵՐ 3» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԴԵՄԵՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Արամուս բնակավայր

Ներածական մաս. «ԴԵՄԵՐ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվում է Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «ԴԵՄԵՐ 3» տեղամասում իրականացնել արդյունահանման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2)-րդ կետի թ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Արամուսի բազալտների հանքավայրի «Դեմեր 3» տեղամասը գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական տարածքում՝ Արամուս բնակավայրից՝ 1.26 կմ դեպի հարավ, Կամարիս բնակավայրից՝ 2.45 կմ հյուսիս-արևմուտք:

Տեղամասին մոտ բնակավայրերն են՝ Գեղաշեն, Զովք, Ձորաղբյուր և Կաթնաղբյուր բնակավայրերը, Աբովյան քաղաքը, որոնց հետ հայցվող տեղամասը կապված է բարենպաստ հողածածկ, ասֆալտապատ ավտոճանապարհներով:

Լեռնագրական տեսակետից տարածաշրջանը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի Արագած-Սյունիքի ենթամարզի Արագածի լեռնազանգվածի արևելյան եզրամասում տարածված Կոտայքի հրաբխային սարավանդին:

Հանքավայրի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝

հյ. լայն 40^0 13՝ 18՚՚

արև. երկ. 44^0 40՝ 08՚՚

Տեղամասերի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միջին միոցենի նստվածքային, հրաբխանստվածքային, վերին պլիոցենի հրաբխային և ժամանակակից դելյուվիալ առաջացումները:

«Դեմեր 3» տեղամասի օգտակար հաստվածքի միջին հզորությունը կազմում է 9.0 մ (այդ թվում թարմ բազալտներինը՝ 7.5 մ, հողմահարված բազալտներինը՝ 1.5 մ):

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
02543163

Համաձայն գնահատման հաշվետվության՝ հայցվող տեղամասում տեկտոնական խախտումներ, սողանքներ, փլուզումներ, գեոդինամիկ երևույթներ չեն դիտարկվել:

Տեղամասի տարածքը ջրազուրկ է, ստորերկրյա ջրային հորիզոններ և աղբյուրներ չեն հայտնաբերվել, տարածքը զուրկ է անտառներից:

Արամուսի բազալտների «Դեմեր 3» տեղամասում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կեդանիներ, ռելիկտային տեսակներ չեն հայտնաբերվել: Հանքավայրի տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, բնության հուշարձանները:

«Դեմեր 3» տեղամասի պաշարները հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 10.09.2024թ-ի թիվ 2115 հրամանով:

Հանքավայրի բազալտներն իրենց որակական ցուցանիշներով համապատասխանում են 9479-2011 ԳOUS-ի տեխնիկական պահանջներին և պիտանի են որպես երեսապատման քար, իսկ բազալտե հաստվածքի վերին շերտի հողմահարված բազալտներն ու բլոկների արդյունահանման արդյունքում առաջացող ջարդոտված բազալտները (ջարդքարը)՝ որպես հումք 8267 ՀUS ԳOUS-ի և 8736-2014 ԳOUS-ի պահանջները բավարարող համապատասխանաբար՝ շինարարական խճի ու ավազի արտադրության համար:

Արամուսի բազալտի հանքավայրի հետախուզված «Դեմեր 3» տեղամասի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են հանքավայրը բաց եղանակով շահագործման համար:

Հայցվող տեղամասի բացահանքը կունենա հետևյալ անկյունային կետերի կոորդինատները՝

	Y	X		Y	X
1	8471640.450	4456122.320	9	8472181.880	4455936.450
2	8471664.210	4456306.070	10	8471986.920	4455914.610
3	8471802.450	4456291.490	11	8471938.820	4456009.240
4	8472001.020	4456287.270	12	8471902.600	4455993.010
5	8472105.000	4456192.000	13	8471892.010	4456021.315
6	8472081.000	4456132.000	14	8471770.160	4455989.385
7	8472080.000	4456060.000	15	8471785.750	4456034.380
8	8472166.180	4455991.670			

Նախատեսում է հանքավայրի տեղամասը մշակել միակողանի ընդլայնական ընթացքաշերտով մշակման համակարգով, մակաբացման ապարները ներքին լցակույտեր տեղափոխելով:

Համաձայն գնահատման հաշվտվության՝ քանի որ, բացահանքի որոշ հատված (հյուսիսային հատվածը) գտնվում է Արամուս բնակավայրի բնակելի տնից 240-250 մ հեռավորության վրա, հեռավորությունն ավելի փոքր է, քան սանիտարապաշտպանիչ գոտին, իսկ բացահանքի հյուսիսային հատվածում գտնվում է Արամուս գյուղի գերեզմանատունը՝ 67 մ, նախատեսվում է հանքավայրը շահագործել 2 փուլով՝ 1-ից 15 տարիների շահագործման ընթացքում (1-ին փուլ) բացահանքի եզրագիծը գտնվելու է սանիտարապաշտպանիչ՝ 300 մ և 50 մ գոտիներից դուրս: Շահագործման 16-20-րդ տարիներին (2-րդ փուլ), բացահանքի 1518 մ հորիզոնի մշակման ընթացքում, երբ բացահանքի եզրագիծը կմոտենա սանիտարապաշտպանիչ գոտու եզրագծին, ընկերությունը կկազմի ՇՄԱԳ հաշվետվություն և կդիմի լիազոր մարմնին՝ նոր շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության համար:

Հայցվող տեղամասի բացահանքի 1-ին փուլի տեղամասի անկյունային կետերի կոորդինատներն են՝

	Y	X		Y	X
1	8471640.450	4456122.320	9	8472181.880	4455936.450
2	8471660.15	4456274.71	10	8471986.920	4455914.610

3	8471861.29	4456257.43	11	8471938.820	4456009.240
4	8471956.20	4456257.07	12	8471902.600	4455993.010
5	8472099.04	4456177.09	13	8471892.010	4456021.315
6	8472081.000	4456132.000	14	8471770.160	4455989.385
7	8472080.000	4456060.000	15	8471785.750	4456034.380
8	8472166.180	4455991.670		S=11.7 հա	

«Դեմեր 3» տեղամասից նախատեսվում է արդյունահանել՝ ըստ A+B կարգերի՝ թարմ բազալտներ՝ 989.5 հազ. մ^3, հողմնահարված բազալտներ՝ 194.2 հազ.մ^3 , այդ թվում՝ ըստ A կարգի՝ թարմ բազալտներ՝ 271.3 հազ. մ^3, հողմնահարված բազալտներ՝ 41.1 հազ.մ^3, ըստ B կարգի՝ թարմ բազալտներ՝ 191.0 հազ. մ^3, հողմնահարված բազալտներ՝ 153.1 հազ.մ^3: Պիտանի բլոկների ելքը կկազմի 24.58 %, մակաբացման ապարների ծավալը՝ 275.3 հազ.մ^3 :

Նախատեսվող բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- առավելագույն երկարությունը՝ 634.0 մ,
- առավելագույն լայնությունը՝ 374 մ,
- բացահանքային դաշտի օտարման մակերեսը՝ 13.2 հա,
- բազալտների հաշվեկշռային պաշարի ծավալը՝ 1183700.0 մ^3,
- բազալտների արդյունահանվող ծավալը՝ 1017727.0 մ^3,
- հանքաստիճանի բարձրությունը՝ 5 մ,
- մարված հանքաստիճանի թեքման անկյունը՝ 750,
- մակաբացման ապարների ծավալը՝ 275300.0 մ^3:

Բացահանքի ծառայման ժամկետը նախատեսվում է 20 տարի:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ մարվող զանգվածի կկազմի 59185.0 մ^3: Հաշվի առելով նախագծային կորուստները, բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ բազալտի արդյունահանվող զանգվածի կկազմի 50887.0 մ^3:

Հանքավայրի շահագործման ընթացքում ընդհանուր բացահանքային կորուստները կկազմեն 165973.0 մ^3 կամ 14.0%:

Թարմ բազալտների արդյունահանումը նախատեսվում է իրականացնել հորատասեպային եղանակով: Հողմնահարված բազալտների արդյունահանումը կիրականցվի էքսկավատորի միջոցով:

«Դեմեր 3» տեղամասի բացահանքի շահագործման համար նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները՝ մուտքային ավտոճանապարհի անցում, 1553.0 մ աշխատանքային հորիզոնից մակաբացման ապարների հեռացում, լցակույտային հրապարակին մոտեցող ավտոճանապարհի անցում, լցակույտային հրապարակի, արտադրական հրապարակի նախապատրաստում: Տեղամասի 1553 մ հորիզոնում բարձրության նիշը նախատեսվում է մուտքային ավտոճանապարհի անցում, որից կիրականացվի աշխատանքային հորիզոնների բացումը՝ բացող կիսախրամների անցումով:

Հանքավայրի ընդունված մշակման համակարգի տարրերը կլինեն հետևյալը՝

1. աստիճանի բարձրությունը՝ 5 մ,
   - ենթաստիճանի բարձրությունը՝ 2.5 մ:
2. հանքաստիճանի թեքման անկյունը՝
   - աստիճանի թեքման անկյունը (աշխատանքային)՝ 90^0,
   - վերջնական դիրքում (մարելուց հետո)՝ 75^0:
3. Աշխատանքային հրապարակի նվազագույն լայնությունը՝ 16.0 մ:

Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվում է իրականացնել՝ միաքարի անջատում զանգվածից, միաքարի հեռացում (քարշ տալը) հանքախորշից դեպի մշակման վայրը, միաքարի մասնատում բլոկների, բլոկների բարձում տրանսպորտային միջոցների մեջ,

նախատեսվող աշխատանքները առավել մանրամասն նկարագրված են գնահատման հաշվետվությունում:

Բացահանքի լցակույտային ապարները ներկայացված են 275300.0 մ^3 ծավալի մակաբացման ապարներով, հողաբուսական շերտի ծավալը կազմում է 19800.0 մ^3:

Նախատեսվում է բլոկների արտադրության ժամանակ առաջացող արտադրական թափոնները և հողմնահարված բազալտները վերամշակել՝ ավազի և խճի ստացման համար, վերամշակումն իրականացվելու է Արամուս բնակավայրի վարչական տարածքում գտնվող ընկերության գոյություն ունեցող ՋՏ կայանքներում:

«Դեմեր 3» տեղամասի շահագործման 10 տարիներին առաջացող մակաբացման ապարների ծավալը կկազմի 137400.0 մ^3, այդ թվում հողաբուսական շերտի ծավալը՝ 9893.0 մ^3: Նշված ապարները նախատեսվում է պահեստավորել բացահանքի եզրագծում՝ ներքին լցակույտերում, առանձին-առանձին: Մակաբացման ապարների լցակույտի հիմքի զբաղեցրած մակերեսը կլինի 1.3 հա, բարձրությունը՝ 10 մ, շեպի թեքման անկյունը՝ 30-35^0, հողաբուսական շերտի լցակույտի զբաղեցրած տարածքը՝ 0.2 հա, բարձրությունը՝ 5 մ:

Շահագործման 11-րդ տարուց սկսած արդյունահանման աշխատանքներին զուգահեռ, երբ կառաջանան մշակված ազատ տարածքներ, լցակույտային ապարները, այդ թվում հողաբուսական շերտի ապարները, կպահեստավորվեն բացահանքի մշակված տարածքներում: Դեպի բացահանքի մշակված տարածքներ կտեղափոխվեն նաև առաջին տարվա ընթացքում ներքին լցակույտում կուտակված մակաբացման ապարները, ներառյալ հողաբուսական շերտը:

Բացահանքի մշակված տարածքներում լցակույտային ապարները կտեղադրվեն բուլդոզերի օգնությամբ՝ կփռվեն մակաբացման, որից հետո, դրանց վրա, հողաբուսական շերտի ապարները: Վերջնական ռեկուլտիվացիոն աշխատանքները կկատարվեն արդյունահանման աշխատանքների ավարտին:

Ռեկուլտիվացիոն տարածքի մակերեսը կկազմի 13.3 հա, այդ թվում՝ բացահանքը՝ 13.2 հա, արտադրական հրապարակը՝ 0.1 հա:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների համար անհրաժեշտ գումարը կկազմի 7177,0 հազ. ՀՀ դրամ, այդ թվում լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի համար 5016,4 հազ. ՀՀ դրամ, կենսաբանական ռեկուլտիվացիայի համար 2160,6 հազ. ՀՀ դրամ:

Արամուսի բազալտների հանքավայրի «Դեմեր 3» տեղամասում արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի ազդեցություններ շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային ռեսուրսներ, օդային ավազան, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա:

Հանքավայրում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր կարող են հանդիսանալ՝ բացահանքը, տրանսպորտը, լցակույտը: Մթնոլորտային օդ արտանետվող վնասակար նյութեր կարող են հանդիսանալ՝ անօրգանական փոշին (բուլդոզերային, էքսկավատորային, տրանսպորտային, քարհատ, մեքենայի աշխատանքներ, լցակույտ), ազոտի և ածխածնի օքսիդները և ածխաջրածինները(դիզելային ու բենզինային վառելիքով աշխատող մեխանիզմներ):

Շրջակա միջավայրի գնահատման հաշվետվությունում «Էко Центр» ծրագրով արտանետումների ազդեցությունը գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ, որոնք համեմատվել են բնակավայրերի համար սահմանված սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ: Հաշվարկներում ներառվել են ինչպես «Դեմեր 3», «Դեմեր 4» տեղամասերից նախատեսվող արտանետումները, այնպես էլ «Դեմեր-3» տեղամասի հարևանությամբ գործող ՋՏ կայանքների տեղամասերից արտանետումները: Գնահատվել է գետնամերձ կոնցենտրացիաները արտադրահրապարակի, սանիտարապաշտպանական գոտու և բնակելի

գոտու եզրերին: Հաշվարկների արդյունքների համաձայն՝ արտանետվող բոլոր նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները, հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները չեն գերազանցի տվյալ նյութի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

Բացահանքի ջրամատակարարումը տեխնիկական ջրով իրականացվելու է բարձման աշխատանքների ժամանակ փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Տեխնիկական ջուրը կբերվի ջրցան-լվացող ավտոմեքենայով, իսկ խմելու ջրի մատակարարումը կիրականացվի ջրի ցիստեռնով:

Կենցաղային կեղտաջրերը օրական կլցվեն բետոնային լցարան, որտեղից պարբերաբար կտեղափոխվեն մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Հանքի արդյունահանման և լեռնակապիտալ աշխատանքների իրականացման փուլերում տարածքի կենսաբազմազանության վրա վնասակար ազդեցություն կարող են ունենալ՝ բացահանքից օգտակար հանածոյի հանման-բեռնման աշխատանքների աղմուկը, ցնցումները, փոշին, ինչպես նաև տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը և դիզելային վառելիքի, քսայուղերի թափվածքները, հայցվող տարածքներում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, քանի որ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ճանապարհի հարևանությամբ, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ:

Բացահանքի շահագործման ընթացքում կառաջանան բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ՝ մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղեր, քսայուղերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոն, մաշված ավտոդողեր, կենցաղային աղբ: Թափոնների քանակի, վտանգավորության դասի, ծածկագրերի և կառավարմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է գնահատման հաշվետվությունում և հաշվետվությանը կից թափոնների կառավարման պլանում:

Բացահանքի շահագործման տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներ կհանդիսանան տրանսպորտի տեղաշարժը, արդյունահանման, բարձման աշխատանքները: Հաշվի առնելով մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի սահմաններից շատ ավելի ցածր մակարդակի վրա (նորման 45 դԲԱ): Ընդերքօգտագործման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված կառաջանա նաև ընդհանուր թրթռում (վիբրացիա), ինչը չի գերազանցի 80 դԲԱ մակարդակը:

Գնահատման հաշվետությունում ներկայացված է բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասը, որը կկազմի 368570.2 հազ. ՀՀ դրամ:

Բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդ, ջրային, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման, նվազեցման նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, որոնք թույլ կտան նվազեցնել հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, այդ միջոցառումներից են՝

- փոշիացումը նվազեցնելու նպատակով տարվա օդի դրական ջերմաստիճանի դեպքում ջրցանի իրականացում՝ օրը 3 անգամ հաճախականությամբ,
- անսարք մեքենաների շահագործման արգելում, աշխատող տեխնիկայի շարժիչների վառուցքների կարգավորում,
- մեքենաների շարժիչների վրա կատալիտիկ չեզոքացուցիչների տեղադրում, ինչը թույլ կտա կրճատել գազերի արտանետումը մթնոլորտ,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЕЗРАКАЦЮТЮУН
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- թափոնների պարբերաբար դուրս բերում բացահանքի տարածքից և տեղադրում հատուկ նախատեսված հարթակներում,
- արտադրական հրապարակից դուրս լրացուցիչ տարածքների խախտման, թափոնների տեղադրման արգելում,
- մակաբացման ապարների տեղափոխում դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր, հատուկ սահմանված երթուղիով,
- բացահանքի և գյուղի հարակից տարածքներում ծառատնկման աշխատանքների իրականացում, և մի շարք այլ բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ հանքավայրի շահագործման ընթացքում հնարավոր վթարային իրավիճակների, բնական աղետների և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար նախատեսվում են մի շարք բնապահպանական համապատասխան միջոցառումներ, որոնք առավել մանրամասն նկարագրված են գնահատման հաշվետվությունում:

Արամուսի բազալտների հանքավայրի «Դեմեր 3» տեղամասում արդյունահանման աշխատանքների շահագործման ընթացքում կիրականացվեն նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության մեղմացմանն ու կանխարգելմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ աղտոտող նյութերի արտանետումների պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ, 24 ժամ տևողությամբ,
2. հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ տարեկան և ամսական մեկ անգամ հաճախականությամբ,
3. վայրի բնության, կենսամիջավայրի մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ և այլն:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուսի բազալտների հանքավայրի «Դեմեր 3» տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Արամուս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացվել են հանրային լսումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժա նացել է հավանության:

Մասնակիցների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից և այլն, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, Կոտայքի մարզպետարանից, Աբովյանի համայնքապետարանից, որոնք ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար բնապահպանական միջոցառումներ:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումները՝ հանքավայրի արդյունահանման աշխատանքների իրականացման ժամանակ բացառել պայթեցման աշխատանքները:
2. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև համայնքում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը:
3. Քանի որ նախագծով հանքավայրի շահագործումը նախատեսվում է իրականացնել 2 փուլով, հանքավայրի շահագործման 16-րդ տարուց սկսած, երբ բացահանքի եզրագիծը կմոտենա սանիտարապաշտպանիչ գոտու եզրագծին (բնակելի և այլ տարածք), անհրաժեշտ է վերանայել աշխատանքային նախագիծը և փոփոխված նախագծային փաստաթղթերը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
4. Արդյունահանման աշխատանքներն իրականացնելիս բացառել հայցվող տարածքին մոտ գտնվող պատմամշակույթային հողերի պահպանման գոտում որևէ աշխատանքների իրականացումը:
5. Բացահանքի և գյուղի հարակից տարածքներում իրականացնել ծառատնկման աշխատանքներ, որը սահմանված է նաև հաշվետվությամբ:
6. Առաջնորդվել Կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N 611-Լ որոշմամբ հաստատված «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների» ծրագրով սահմանված պահանջներով:
7. Արդյունահանման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջներով:
8. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների

արդյունքների տարեկան հաշվետվությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմնին:

9. Հանքարդյունահանման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել 2002 թվականի ապրիլի 13-ի «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին հրամանով:
10. Աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման դեպքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԴԵՄԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «ԴԵՄԵՐ 3» տեղամասում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան